ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ներքին գործերի նախարարության կազմավորման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ հաստիքացուցակը հաստատելու մասին

ԹԻՎ 1-Լ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-457-Ն օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2023 թվականի հունվարի 9-ի «Ներքին գործերի նախարարության ստեղծման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ հաստիքների թվաքանակը հաստատելու մասին» թիվ 4-Ա որոշումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կազմավորման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

«12» 01 2023թ.

քաղ. Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻ

«12» 01 2023թ. ԹԻՎ 1-Լ ՀՐԱՄԱՆԻ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	
	ՍԱՀՄԱՆ-ՎՈՒՄ Է	ԿՐՃԱՏ-ՎՈՒՄ Է
Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարություն		
Նախարար	1	-
Նախարարի տեղակալ	4	-
Գլխավոր քարտուղար	1	-
Նախարարի խորհրդական	3	-
Նախարարի օգնական	2	-
Նախարարի տեղակալի օգնական	4	-
Փորձագետ	35	-
Ընդամենը՝ սահմանվել է 50	50	-